Ծրագրով պահանջվող փաստաթղթեր

Մինչ վարկավորումը

- Հողատարածքի տեղի, հիմնվող այգու չափերի և պտղատեսակի, տնկման բանաձևի վերաբերյալ տեղեկատվություն,
- Հողի ագրոքիմիական բաղադրության լաբորատոր փորձաքննության եզրակացության պատճեն (առավելագույնը 6 ամսվա վաղեմության),
- Կենսադինամիկ խաղողի այգու հիմնման դեպքում՝ մշակության միջոցառումների նկարագիր,
- Համայնքի (վարչական շրջանի) ղեկավարի կողմից հաստատված տեղեկատվություն՝ այգեհիմնմանը նախորդող երեք տարիների ընթացքում տվյալ տարածքում մշակված մշակաբույսերի վերաբերյալ,
- Ծախսերի նախահաշիվ,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված եզրակացություն,
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն (պատճեններ), եթե գրանցված իրավունքն ընդհանուր համատեղ սեփականություն է կամ վարձակալություն(օգտագործում), ապա ներկայացվում է նաև նոտարական կարգով վավերացված՝ անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) համաձայնությունը՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ, ընդ որում, անշարժ գույքի վարձակալության (օգտագործման) ժամկետն այգեհիմնման դեպքում չպետք է պակաս լինի դիմումը ներկայացնելու օրվանից հաշված՝ 20 տարուց, ոռոգման արդիական համակարգի ներդրման դեպքում՝ 6 տարուց, կարկտապաշտպան ցանցի դեպքում՝ 7 տարուց, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի դեպքում՝ մինչև 2 տարուց, իսկ ծնեբեկի դեպքում՝ 10 տարուց,
- անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում գրանցված հողամասի մի մասում արդեն իսկ հիմնված այգու առկայության դեպքում նույն վկայականով հողամասում ծրագրի շրջանակներում նոր այգի հիմնելու, հողամասի փաստացի չափերը անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում նշված չափերից տարբերվելու, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում գրանցված հողամասի միայն մի մասում ներդրում կատարելու դեպքերում ներկայացնել նաև ներդրվող հողամասի կոորդինատները՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով և ներդրվող հողամասի չափագրման արդյունքների վերաբերյալ տեղեկանք,
- Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի կոորդինատներ: Եթե գրանցված իրավունքն ընդհանուր համատեղ սեփականություն է կամ վարձակալություն (օգտագործում), ապա ներկայացվում է նաև նոտարական կարգով վավերացված՝ անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) համաձայնություն՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ,
- Այգեհիմնման ժամանակահատվածում և հաջորդող 3 տարիների համար Վարկառուի և խորհրդատվական ծառայություն մատուցողի միջև կնքված պայմանագիր:

Այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո

- Արտերկրից ձեռք բերված կամ տեղական արտադրության (տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրումից հետո) տնկանյութի (պիստակենու դեպքում՝ տնկանյութի կամ սերմի) ծագումն ու որակը հավաստող փաստաթուղթ (հավաստագիր),
- Արտերկրից ձեռք բերված տնկանյութի բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ակտ,
- Տնկանյութի ներկրումը հավաստող փաստաթղթեր, իսկ տեղական արտադրության դեպքում (մինչև հանրապետությունում տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրումը)՝ բուսասանիտարական անձնագիր (տրամադրված՝ մինչև այգեհիմնումը),
- Այգեհիմնման աշխատանքների ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, նոտարական կարգով վավերացված կապալառուի հետ կնքված պայմանագրի պատճեն, վճարման անդորրագիր, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հաշվարկային փաստաթուղթ,
- Ջրավազանի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի կոորդինատներ,
- Հիմնված այգու նպատակային նշանակության և (կամ) գործառնական նշանակության կամ հողատեսքին համապատասխան անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն (պատճեններ) և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի կոորդինատներ,
- Անշարժ գույքի նկատմամբ օտարման և այլ իրավունքներով ծանրաբեռնելու սահմանափակման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանք,
- Ջրօգտագործման թույլտվությունը կամ ջրօգտագործողների ընկերության հետ կնքած պայմանագրի պատճեն կամ ներդրված հողատարածքը ջրօգտագործողների ընկերության սպասարկման տարածքում չգտնվելու դեպքում՝ համապատասխան տեղեկանք,
- Ձեռք բերված և ներդրված, նույնականացման կոդեր ունեցող գույքի ցանկ՝ իրենց կոդերով,
- Կապալառուի (ենթակապալառուի)՝ տվյալ բնագավառի որակավորված աշխատող ունենալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ կամ վկայական (հավաստագիր), աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք),
- Կապալառուի կողմից տրված երաշխավորագիր այն մասին, որ ոռոգման արդիական համակարգի խողովակների համար սահմանված ճնշումն ապահովված է համակարգի խողովակաշարի ամբողջ երկարությամբ և այգիների դեպքում համակարգը ենթակա է շահագործման (համակարգը կապալառուի կողմից ձեռք բերված լինելու դեպքում) հետներդրումային 4 տարիների ընթացքում,
- եթե ծրագիրն իրականացվել է առանց կապալառուի ներգրավման (10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու կամ 10 հազար խորանարդ մետր և ավելի ծավալով ջրավազանի կառուցման դեպքերում), ապա՝ աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպության կողմից տրված, վահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը:

Ֆիզիկական անձանց դեպքում

- Անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթի պատճենը կամ պետական ռեգիստր վարող մարմնի կողմից հանրային ծառայությունների համարանիշ ստանալու կամ հրաժարվելու վերաբերյալ տրվող տեղեկանքի բնօրինակ,
- Որպես վարկի ապահովման միջոց հաճախորդի կողմից առաջարկվող գրավի սեփականութունը հաստատող փաստաթղթեր,
- Երաշխավորների և/կամ գրավատուների անձնագրերի պատճեններ,առկայության դեպքում ամուսնության վկայականներ,
- Գրավ(ներ)ի սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերանձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ,
- Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:

Իրավաբանական անձանց դեպքում

- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- Հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- Էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- Իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,[1]
- Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),[1]
- Տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,[1,2,3]
- Քաղվածք ռեեստրից՝ բաժնետիրական ընկերության դեպքում,[3]
- Գրավ(ներ)ի սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ,
- Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:

1 Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:
2 Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում՝ իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:
3 Կարող է ներկայացվել Բանկի կողմից վարկը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո: